Սակայն, ճակատամարտը տեղի ունեցաւ նախատեսուածից մի քիչ տարբեր ձևով։ Հեռախօսային կապ չլինելու պատճառով՝ Կորոլկովը մի քանի ժամ ուշ ստացաւ հրամանը, և նախաձեռնութիւնը նրա ճակատում անցաւ թշնամու ձեռքը։ Ժամը 8-ին վրացիները, սպայական գումարտակի գլխաւորութեամբ, դիմեցին ուժեղ յարձակման, Գիւլ-Դաղիի մօտ պատռեցին մերոնց շղթան և շարժուեցին դէպի Գեղեք-Բուռուն լեռը։ Ժամը 1-ին թշնամու յառաջխաղացման մասին լուր ստացուեց զօրամասի սպայակոյտում, և Դրօն շտապեց պահեստից օգնութեան հասցնել 2րդ գնդի 2րդ գումարտակը, որը կանգնեցրեց վրացիների արշաւը։

Ժամը 2-ին ուժգին յարձակման անցաւ 6րդ գունդը՝ շարժուելով դէպի 2660 բարձունքը։ Կենտրոնական ճակատից անընդհատ տեղեկութիւններ էին ստացւում, որ վրացիները 2660 բարձունքի կողմերից, Մամայից ու Դամիայից Սաղախլու էին քաշում իրենց ուժերը և շարժւում դէպի Գիւլ-Բաղի։ Եւ որովհետև ձախ թևը չէր շարժւում, Դրօն հրամայեց աջ զօրասիւնին ցոյց տալ վճռական գործունէութիւն և մի զօրասիւն ուղարկել դէպի Սաղախլու՝ Գիւլ-Բաղիի ուղութեամբ գործող վրացիներին թիկունքից հարուածելու համար։

6րդ գունդը յառաջացաւ երկու թևով. մէկը՝ 1 գումարտակ՝ Գիւնաշ-Թափայից 2660 բարձունքի լանջերով շարժուեց դէպի Լամբալու և Սաղախլու։ 6րդ լեռնային մարտկոցի 2 թնդանօթը կրակ բաց արին Սաղախլուի վրա. 2660 բարձունքի վրա տրուեց մի պահակ։ Միւս գումարտակը գործում էր Բասումլուի և Կաչաղանի շրջանում։

Միաժամանակ, Սաղախլուի վրա կրակ բաց արեց և 7րդ լեռնային մարտկոցը, և 2րդ գնդի 3րդ գումարտակը 2702 բարձունքից սկսեց հարաւից իջնել դէպի Սաղախլու։ Զրահապատը, առաջ անցնելով, օգնում էր 3րդ գումարտակի էջքին։

Ձախ թևի վրա շարունակւում էին կատաղի կռիւները. վրացիները տարածւում էին Գեղեք-Բուռունի ուղղութեամբ։

Ժամը 3-ի մօտերը, 6րդ գնդի 2րդ գումարտակը սկսեց մօտենալ 2660 բարձունքի կատարին։ Վրացիները բաց արին ուժեղ գնդացիրային կրակ, բայց մերոնք առաջ շարժուեցին գնդակների տարափի տակ՝ պատրաստ անցնելու սինամարտի։ Վրացիները խուսափեցին սինակուից և ժամը 4 ու կէսին փախան։ 2660 բարձունքը անցաւ հայերի ձեռքը, որոնց առաջաւոր մասերը սկսեցին իջնել դէպի Մամայ՝ կտրելով Սաղախլուի ճակատում գործող վրացական զօրքերի թիկունքը։ Երեկոյեան 6րդ գնդի ձախ զօրասիւնը գրաւեց Լամբալուն, իսկ 2րդ գնդի 3րդ գումարտակը ներս խուժեց Սաղախլուի հարաւային մասը։

Գիշերը կռիւը դադարեց։ Թիկունքից կտրուած՝ վրացիները կանգնեցին Գիւլ-Բաղիի շրջանում և սկսեցին կամաց-կամաց յետ քաշուել։ Մեր ձախ զօրամասը բռնեց բարձունքները Խոժոռնիի, Գիւլ Բաղիի ու Բարդաձորի գլխին։